



ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԿԱՒԱԳ ՅՈՎՍԷՓԵԱՆՑ

ԼՈՒՍԱՒՈՐԶԻ ԿՈՉԸ.

Եկայք շինեցուք սուրբ զԽորանն լուսոյ:
Ծարական.

Մեր բաղդի անհր այսօր մի տարօրինակ շրջան է կատարում: Մեզ թուում է, թէ մի կործանիչ ոյծ իր գօրութեան ազդեցութիւնն է տարածում մեր բովանդակ կեանքի ամեն մի շրջանի վերայ, և թէ մենք արհմով ներկուած վերջալոյսի ականատեսի մի սերունդ ենք, որ արևի վերջին ճառագայթների հետ՝ պէտք է մայր մտնեն և մեր լուսոյ վերջին նշոյլները:

Բայց ահա մեր ականջին հնչում է սրբազան երգչի խօսքերը. «Էջ Միածինն ի Հօրէ և յոյս փառաց ընդ նմա» և մեր միտքը պանում է դէպի այն երջանիկ ժամանակը, որի համար երգում են այս նուիրական տողերը: Մեր հոգու առաջ կենդանանում է Հայի հոգետը վերածնութեան սկիզբը, Լուսաւորչի հսկայ անձնաւորութիւնը իր կենսաբեր գործունէութեամբ և հետևանքներով: Նա անձեռագործ մի արձան կանգնեց անելի տևական և անելի խօսուն, քան պղինձն ու երկաթը, բայց և այդ անձեռագործ արձանի յայտարար հիմնեց այն անշուք շէնքը, որը սակայն Հայի վերածնութեան առաջանն է եղել դարէ ի դար: Դարեր են եկել, դարեր անցել, բայց նա հաստատուն խարխալ է մնացել մեր գոյութեան համար: Նա իբրև կենդանի վկայ՝ ականատես է եղել իր որդւոց գլխին հասած անլուր աղէտներին և իբրև գթաւատ մայր

մխիթարութեան և սփոփանքի աղբիւրներ է հոսեցրել նոցա արտի մէջ: Ծառ անգթութիւնների և անբոսների է տեսել նա, բայց ամեն անգամ էլ վերակենդանութեան յոյս ներշնչել լուսահատ արտերի մէջ: Այսօր ևս, երբ մեր մտքի առաջ պտտող պատկերները հազարաւոր Հայերի յօշոտուած դիակներն են, երբ մերկ, սովալլուկ որբերն ու այրիները, կանայք և տղամարդիկ հեռու իրենց սրբազան երկրից՝ օտարի, անելի լաւ առած, մահուան դռներն են բաղխում, և երբ հայրենիքի և եկեղեցու փլատակների փոշին ամեն կողմից վեր է բարձրանում՝ սրբազան երգչի խօսքերը յիշեցնում են մեզ, որ դեռ ևս ամեն ինչ կորած չէ, թէ դեռ ևս կանգուն է Հայութեան «Լուսոյ Խորանն», Մայր Աթոռ ս. Էջմիածինը:

Քաղցր և նուիրական անուն:

Ե՛րբ է եղել Հայի օրը այնպես սև, ինչպես այժմ. ե՛րբ է եղել նորա ապագան անելի մոռլլ և լուսահատ, քան այժմ: Բայց այսօր ևս Մայր տաճարի սրբազան կամարների տակ հնչում է Լուսաւորչի քարոզը. «Եկայք շինեցուք սուրբ զԽորանն Լուսոյ»: Ինչպէ՛ս խորհրդաւոր է հնչում այդ կոչը, երբ հոգևոր և բարոյական անբաւականները մէկ մէկու տեղի են տալիս:

Սրբազան երգիչը հիմնուելով Լուսաւորչի

տեսիլքի վերայ՝ այս հաստատությունը «Լուսոյ Խորան» է անուանում: Դորանով որոշումած է և նորա կոչումը: Նա հիմնում էր հոգևոր դաստիարակության մայր լինելու, նորանից պիտի բխեին անտարանի լուսոյ ճառագայթները Հայության սրտի խորքերը լուսաւորելու: Անցեալից գիտենք մենք, որ նա հաւատարիմ է մնացել այդ կոչման: Եկեղեցին հայության հոգևոր քաղաքակրթության լուսաւորութեան փարոսն է եղել միշտ: Հայի հոգևոր և մտաւոր շարժման արդիւնքները համարեա առանց բացառութեան Լուսոյ Խորանի աղբիւրներից են բրդիւն: Գիր, մատենագրութիւն, սրբագան արուեստ, հոգևոր կեանք, այս բոլորը մեր եկեղեցու շնորհն է, որ մենք վաշելելու բաղդ ունինք: Նա մեր հոգևոր վերածնութեան որորանն է եղել, երբ խաւարն ու մահր մեզ կլանել են սպառնացել:

Այսօր եւ, երբ Լուսաւորչի հոգին մեր եկեղեցու աներակների վերայից վերաշինութեան հրաւեր է կարդում, մենք ուրիշ ճանապարհ չունինք ընտրելու, բայց եթէ կրօնական, հոգևոր վերածնութեան ճանապարհը: Ազգերի վերակենդանութեան ճշմարիտ ճանապարհը կրօնական վերակենդանութեան ճանապարհն է: Փրկչի խօսքը՝ «Եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ տեսանել գարբայութիւնն Աստուծոյ» կարելի է և ազգերին ուղղել: Կրօնն է ճշմարիտ կեանքի աղբիւրը, ուրեմն և կրօնական վերածնութիւնը մի նոր և ճշմարիտ կեանքի սկիզբ: Մեր ներկայ կեանքը լի է վերքերով: Մեր կեանքը լի է հիւանդ երևոյթներով, որոնք իրենց կողմից

ամենաճանր հետևանքներ են յառաջ բերում: Հոգևոր են այդ վերքերը, հոգևոր գէնքերով էլ պէտք է դոքա ապաքինուին:

Մենք մի մեծ մարտ ունինք խաւարի կործանիչ ոյծի դէմ, ուստի և մեզ գէնք է պէտք, ոչ մետաղից, այլ Աստուծոյ հոգւով կրած: Նա անելի սուր է և կտրուկ, քան երկաթն ու պողպատը: Ժամանակը ծանր է և լուրջ, իսկ մենք թեթև ենք և անհետատես, ժամանակը հիմնաւորութիւն է պահանջում և գործ, իսկ մենք օդային ամրոցներ ենք կառուցանում և բառեր արտասանում: Մեր անկեղծ համոզմամբ ճշմարիտ վերակենդանութեան աղբիւրը կրօնական վերածնութեան մէջ պէտք է որոնել: Մեր եկեղեցին պէտք է անելի բարօշական ոյծ, կենսատու գործութիւն ունենայ, եթէ մենք յուսալից մի նոր կեանք սկսել ենք կամենում:

Արդ Մայր Աթոռն է այն կեդրոնը, որտեղից հայության համար հոգևոր, կրօնական կեանքի մի նոր հոսանք պիտի սկսուի. «Օրէնք ի Սիոնէ ելցէ»: Այստեղ է հաստատում Լուսաւորչի՝ Հայաստանեայց վերածնութեան հօր՝ սուրբ գաւազանը, որ նորա հօտին միշտ ի փրկութիւն է հովուել: Այստեղ եւ պէտք է նորա հոգին, որ Հայի վերածնութեան սկզբնաւորութեան առիթն է եղել, միշտ կենդանի և միշտ գործունէայ մնայ: Նոյն հոգին և այսօր սրբագան երգչի բերանով Մայր Աթոռի միաբանութեանն է ուղղում իր հրաւերը: «Եկայք շինեցուք սուրբ զԽորանն Լուսոյ»:

(«Արարատ», 1897, հունիս, էջ 269—270)

